ժամանակ կատարվող շարժական խաղերի մասին։ Գրանցվել են նաև Ալաշկերտի մի շարք պարեր՝ տեղի վերաբնակիչներից։

Երաժշտական ֆոլկլորի գծով ձայնագրված նյութերից ուշագրավ են հին և ժամանակակից երգերը, պարերգերը, մենապարերը, խմբապարերն ու աշխատանքային, ծիսական և այլ բնույթի երգերը։ Ընդհանուր առմամբ Իջևանի շրջանում արշավախմբերի հավաքած բանահյուսական, երաժշտական և պարային ֆոլկլորի նյութերը ինչպես գաղափարական բովանդակության, այնպես և գեղարվեստական-արտահայտչական տեսակետից վերաբառդրում են տվյալ բնակավայրի ժողովրդի աշխարհընկալման, սոցիալական կյանքի, կենցաղի գծերը, նրա ազգագրական, տեղագրական առանձնահատկությունները։ Այդ նյութերը կոգտագործվեն ժողովրդական բանահյուսության գծով կատարվող համահավաք հրատարակությունների և հետազոտությունների ընթացքում։

Ազգագրական գիտարշավախմբի մի չոկատ, որի կազմում էին գիտ. աշխատակիցներ Վ. Բգոյանը, Ա. Ոդաբաշյանը և լուսանկարիչ Գ. Ժամկոչյանը, նյութեր է հավաքել Լեռնային Ղարաբաղում (Վ. Բգոյան) և Զանգեզուրում (Ա. Ոդաբաշյան)։ Պատմական գիտությունների թեկնածու Վ. Բգոյանը եղել է Առեփանակերտում, Շուշիում, Խանաձոր գյուղում, և ազգագրական նյութեր է հավաքել երկրագործության վերաբերյալ, իսկ կրտսեր գիտ. աշխատակից Ա. Ոդաբաշյանը՝ հավատալիքների և ժողովրդական տոների մասին՝ Գորիսում և Խնձորեսկ, Շինուհայր, Խանաձոր, Քարահունջ գյուղերում։

Ավագ գիտական աշխատակից Ս. Լիսիցյանը Ժ. Խաչատրյանի մասնակցությամբ գրանցել է շուրջ 150 պարեր, պարերգեր, ծեսեր և այլ կարգի նյութեր Ապարանի, Աբովյանի, Կամոյի և Վստաֆրայանի ինֆորմատորներից։

Հնագիտական, ազգագրական և ֆոլկլորային արշավախմբերի ամենամյա աշխատանքների շնորհիվ հայտնաբերվում, հավաքվում և գիտական շրջանառության մեջ են մտցվում նորանոր նյութեր, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության, նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության համար։

Բ. Ն.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ

1961 թ. օգոստոսին Բերկլի քաղաքում (ԱՄՆ, Կալիֆորնիայի նահանգ) տեղի ունեցավ Միջազգային աստղագիտական միության XI համագումարը, որին մասնակցում էին աշխարհի բազմաթիվ երկրների հազարից ավելի գիտնականներ։ Սովետական գիտնականների դելեգացիան, որի կազմում էին՝ Ղրիմի աստղադիտարանի դիրեկտոր, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ռ. Սևերնին, Պուլկովոյի աստղադիտարանի դիրեկտոր, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ա. Միխայլովը և սովետական ուրիշ ականավոր աստղագետներ, ղեկավարում էր Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Սովետական գիտնականները մասնակցեցին համագումարին նախորդած սիմպոզիումներին։ Արտասահմանյան աստղագետների վրա մեծ տպավորություն գործեցին առանձին գալակտիկաների ֆոտոնկարները, որոնք ստացվել են սովետական հզոր տելեսկոպի օգնությամբ։ Տելեսկոպի մոդելը ցուցադրված էր Կալիֆորնիայի համալսարանի այն շենքում, ուր տեղի էին ունենում համագումարի նիստերը։

Համագումարում աշխարհի տարբեր երկրների գիտնականները ինֆորմացիաներ տվեցին իրենց կատարած աշխատանքների մասին, պլաններ մշակեցին աստղագիտության տարբեր ճյուղերի գծով ապագայում կատարվելիք համատեղ հետազոտությունների համար։ Հետազոտությունների կոորդինացման խնդիրները քննարկվում էին Միջազգային աստղագիտական միության 40 մշտական հանձնաժողովներում։

Ի տարբերություն անցյալ համագումարների, այս տարի պլենար նիստերում տրվեցին ամփոփիչ բնույթի ընդարձակ զեկուցումներ։ Այդ զեկուցումներից երկուսը կարդացին ամերիկյան աստղագետներ Վան Ալենը և Շվարցշիլդը։ Հատուկ պլենար նիստ էր նվիրված ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի զեկուցմանը, որի մեջ քննարկվեցին արտագալակտիկական աստղաբաշխության պրոբլեմները։

Համագումարում ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ռ. Սևերնու տված զեկուցումը նվիրված էր արևի վրա տեղի ունեցող մագնիսական երևույթներին։ Պրոֆ. Բ. Ա. Վորոնցով-Վելյա-

մինովը հաղորդեց փոխադարձ ազդեցությունների մեջ գտնվող գալակտիկաների վերաբերյալ ստացված նոր արդյունքների մասին։ Հատուկ հետաքրքրություն առաջացրեց առաջին անգամ Բյուրականում հայտնագործված սպիտակ թզուկներից կազմված աստղային կուտակումների մասին գիտական հաղորդումը։

Ամերիկյան աստղագետները զեկուցեցին Մերկուրի մոլորակի ռադիոճառագայթման հայտնաբերման մասին։ Անգլիացի պրոֆ. Ռայլը պատմեց առանձին ռադիոգալակտիկաների հաշվառման ուղղությամբ իր աստղադիտարանում կատարվող աշխատանքների մասին։

Միջազգային աստղագիտական XI համագումարն անցավ տարբեր երկրների գիտնականների համագործակցության մթնոլորտում և նպաստեց նրանց ջանքերի միավորմանը՝ սիներգերի ճանաչման գործում։

Համագումարը հաջորդ երեք տարվա համար Միջազգային աստղագիտական միության պրեզիդենտ ընտրեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին։

Ա. Գ.